

#### 5.4. 2011 թվականի մայիս ամսվա շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մոնիթորինգ

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության շրջակա բնական միջավայրը 2011թ. մայիսին ունեցել է հետևյալ բնութագիրը.

**Օդային ավազանի որակի մոնիթորինգ:** Մայիսին հանրապետության մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգ իրականացվել է Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան և Արարատ քաղաքներում տեղակայված 14 դիտակայանների, Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Ծաղկաձոր, Վաղարշապատ, Աբովյան և Սևան քաղաքներում տեղակայված պասիվ նմուշառման 146 դիտակետերի, Երևան, Ալավերդի, Ծաղկաձոր քաղաքներում և Ամբերդ գյուղում տեղակայված ավտոմատ կայանների միջոցով: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 48530 փորձանմուշ:

**Երևան քաղաքի** հինգ դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 474 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.7 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 2.0 անգամ: Քաղաքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ավտոմատ կայանների միջոցով որոշվել են ածխածնի մոնօքսիդի, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 20776, ծծմբի երկօքսիդի համար՝ 14068, ազոտի օքսիդների համար՝ 2445, գետնամերձ օզոնի համար՝ 866 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքերի տվյալների, մթնոլորտային օդի փորձանմուշներում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.5 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 16 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 142 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Գյումրի քաղաքի** մշտական դիտակայանում փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 24 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.5 անգամ: Ապրիլ ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.2 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 239 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Վանաձոր քաղաքի** մշտական երեք դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով վերցված մթնոլորտային օդի 180 փորձանմուշներում և պասիվ նմուշառման 24 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 183 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Ալավերդի քաղաքի** մշտական երկու դիտակայաններում, ինչպես նաև ավտոմատ կայանում, ակտիվ նմուշառման եղանակով վերցված մթնոլորտային օդի 178 փորձանմուշներում և պասիվ նմուշառման 18 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 143 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիա-

ները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնոքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 5279 դիտարկում:

**Հրազդան քաղաքի** մշտական դիտակայանում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 75 փորձանմուշ: Մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 6.4 անգամ, իսկ միանվագ առավելագույն կոնցենտրացիան՝ 4.6 անգամ: Ապրիլ ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.2 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 12 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 96 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Արարատ քաղաքի** մշտական դիտակայանում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 31 փորձանմուշ: Մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան դիտվել է թույլատրելի նորմայի սահմանում: Ապրիլ ամսվա համեմատ ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 6.4 անգամ:

**Ծաղկաձոր քաղաքի** պասիվ նմուշառման 14 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 112 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնոքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 2125, ազոտի օքսիդների համար՝ 777 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, ավտոմատ կայանի հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.2 անգամ:

**Վաղարշապատ, Աբովյան և Սևան քաղաքների** պասիվ նմուշառման համապատասխանաբար 16, 12 և 10 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 127, 119 և 40 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Ամբերդ գյուղում** ավտոմատ եղանակով վերցված օդի 31 փորձանմուշներում ազոտի երկօքսիդի պարունակությունը դիտվել է թույլատրելի նորմայի սահմանում:

**Ամբերդ գյուղի ավտոմատ կայանի հարակից տարածքի տեղումներում (անձրև) վերահսկվող նյութերի պարունակությունը, 2011թ. մայիս**

(մգ/դմ<sup>3</sup>)

Նմուշների վերցման ամսաթիվը	Ցուցանիշներ					
	ջրածնային ցուցիչ (pH)	սուլֆատ իոն	քլորիդ իոն	նիտրատ իոն	ամոնիում իոն	տեսակարար էլեկտրահաղորդականություն (μՄիմ/սմ)
01	6.28	0.209	0.050	0.206	0.417	3.7
04-05	6.47	4.296	0.940	3.243	0.690	12.8
05-06	6.82	1.106	0.245	0.804	0.663	12.7
06	6.15	1.044	0.940	0.834	0.266	15.0
16	7.00	1.193	0.196	0.816	0.301	22.8
18-19	7.19	1.418	0.217	0.969	0.273	26.1
21-22	7.42	4.170	1.646	3.495	0.574	70.2
23	7.47	4.268	0.768	3.559	0.526	71.2
24	7.42	0.818	0.400	0.729	0.403	17.5
25	6.55	0.951	0.088	1.090	0.396	17.4
28	6.54	1.016	0.598	0.722	0.492	25.6

**Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ:** Մայիսին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 40 գետերի, Ապարանի, Արփիլճի, Ախուրյանի, Կեչուտի ջրամբարների, Երևանյան և Սևանա լճերի 115 դիտակետերում: Վերցված 124 փորձանմուշներում որոշվել է 20-22-ական ցուցանիշ:

**Մակերևութային ջրերի աղտոտվածության վիճակը, 2011թ. մայիս**

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները				
			ԹԿՊ <sub>5</sub> (ՍԹԿ՝ 3.0 մգ/դմ <sup>3</sup> )	ԹԿՊ (ՍԹԿ՝ 30.0 մգ/դմ <sup>3</sup> )	նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգN/դմ <sup>3</sup> )	ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգN/դմ <sup>3</sup> )	սուլֆատ իոն (ՍԹԿ՝ 100.0 մգ/դմ <sup>3</sup> )
Փամբակ	4	ք.Վանաձորից 4.5 կմ ներքև	-	-	-	1.363	-
Տաշիր	12	Սարատովկա գյուղից 0.5 կմ ներքև	-	34	-	-	-
Ախթալա	14	Գետաբերան	-	-	-	-	190.0
Արաքս	29	ք.Ագարակից 2 կմ հարավ	-	-	0.054	-	117.8
	30	ք.Ագարակից 2.5 կմ հարավ-արևելք	-	-	0.055	-	116.9
Ախուրյան	31	Ամասիա գյուղից 0.5 կմ վերև	3.9	-	-	-	-
	32	Ամասիա գյուղից 1 կմ ներքև	4.4	-	-	-	-
	33	ք.Գյումրիից 0.8 կմ վերև	3.5	-	-	-	-
	34	ք.Գյումրիից 5 կմ ներքև	3.8	-	0.030	0.909	-
Աշոցք	36	Արտաշեն գյուղից 0.5 կմ վերև	3.7	-	-	-	-
	37	Գետաբերան	3.9	-	-	-	-
Կարկաչուն	38	Գետաբերան	-	-	0.092	0.533	127.1
Սևջուր	40	ք.Վաղարշապատից 10 կմ հարավ	-	-	0.058	0.696	129.9
	41	ք.Վաղարշապատից 11 կմ հարավ-արևելք	-	36	0.081	-	-
	42	Ռանչպար գյուղից 0.5 կմ ներքև	-	-	0.092	-	-
Գեղարոտ	49	Գետաբերան	-	-	0.041	-	-
Հրազդան	55	Դարբնիկ գյուղի մոտ	-	-	0.073	1.072	-
	56	Գետաբերան	-	-	0.060	-	-
Գետառ	59	Գետաբերան	-	-	0.120	1.414	341.1
Ձկնագետ	60	Սեմյոնովկա գյուղից 0.5 կմ վերև	3.4	-	-	-	-
	61	Գետաբերան	3.7	-	-	-	-
Մարիկ	63	Գետաբերան	3.7	-	-	-	-
Արփա-Սևան ջրատար	68	Ծովինար գյուղից 0.7 կմ վերև	3.3	-	-	-	-
Վարդենիս	69	Վարդենիկ գյուղից 0.5 կմ վերև	3.6	-	-	-	-
Արգիճի	73	Լեռնահովիտ գյուղից 0.5 կմ վերև	3.5	-	-	-	-
Ծակքար	75	Գետաբերան	3.8	-	-	-	-
Ողջի	91	ք.Քաջարանից 1.7 կմ վերև	3.6	-	-	-	-
	94	ք.Կապանից 6.8 կմ ներքև	-	-	0.028	-	-
Արծվանիկ	96	Գետաբերան	-	-	0.079	-	172.8
Որոտան	99	Գորայք գյուղից 0.5 կմ վերև	3.3	-	-	-	-
	101	ք.Սիսիանից 1 կմ ներքև	-	-	0.052	0.529	-
Սիսիան	104	Գետաբերան	-	-	0.039	-	-
Գորիսգետ	107	ք.Գորիսից 1.5 կմ ներքև	-	-	0.090	1.162	-
Ախուրյանի ջրամբար	110	Ամբարտակի մոտ	-	-	-	0.431	-